

ԳԼՈՒԽ ԻԴ

Ամեն կրօնքներու առաջինն է իւր կրօնքը պահել, եւ երջանկութեանց ամենեն մեծն է գայն լաւագոյնը կարծեր

ՊԻԻՖՈՆՆ

Բայց այդ հարուածն նաեւ չի յուսահատեցուց զթեոդորոս. գնաց Կարին իւր բարեկամ եւ անուանակցին հետ տեսնուելու, եւ դեռ քաղաք չի մտած յունաց սպայակոյտին վրայ գոռոզ փոփոխութիւն մը նշմարեց: Առանց կարեւորութիւն տալու, Ստրատելատին բնակարանը ուղղուեցաւ եւ տեսաւ սպասաւորաց եւ թիկնապահաց երեսները գունատ եալ եւ պատրաստութիւն ճանապարհի: Եւ երբ բարեկամին սենեակը մտաւ, տեսաւ, որ նա զբաղած էր շատ մը թղթեր այրելու:

– Ժամանակին հասար, բարեկամ,— ըսաւ Երիզացին,— վասնզի ես առանց զքեզ տեսնելու նաեւ պարտաւորուած էի երթալ: Դու լաւ կշռեր էիր այդ երիտասարդ կայսրը. գագան մը գահին վրայ հանեցինք:

– Պաշտօնեդ կը զրկե՞ քեզ այդ տղան:

– Եթէ վտանգն այնչափ է, գոհ պետք է լինիմ: Երեւակայէ, որ երեք օր է չորս սուրհանդակ ստացեր եմ մայրաքաղաքէն, եւ ահա հինգերորդը, որ այս առաւօտ կը հասնի, ինձ սաստիկ հրաման կը բերէ վայրկենին զօրավարութեան պաշտօնս յանձնել Մաւրիանոսի եւ դառնալ Պոլիս: Եթէ կին եւ զաւակներ, եւ ամեն բան այդ գագանին ձեռքին մէջ չլինէին, գիտէի ինչ ընելիքս:

– Բայց ի՞նչ է իւր արարքը, այն պատմե՛, եղբայր:

– Աստուածաբանութեան կատաղութիւնն ունի այս երիտասարդը, կ'երեւայ թէ այս կայսերական աթոռին վրայ ժառանգական է այդ հիւանդութիւնը: Իւր պապը Յերակլիոս վերջին ժամանակները երբ պատերազմին դաշտը թողած դարձաւ Պոյ,չիս, ես ի պաշտօնէ բռնադատ եալ, իւր քով մտայ իմացնելու համար, թէ Եգիպտոս եւ Աղեքսանդրիա նաեւ մահմեդականաց ձեռքն են ինկեր: Ծեր կայսրը չորս վարդապետներէ շրջապատեալ նստած էր. իմ տխուր կերպարանքս տեսնելով հարցուց, թէ ինչ նոր լուր ունէի. ես երբ զգուշութեան ձեւերով եւ երկիւղով իմացուցի աշխարհին կորուստը, նա վայրկեան մը մտածութեան ինկաւ. եւ վերջը ինձ հարցուց. «Թեոդորո՛ս, դու ինչպե՞ս կը